ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

« 08 » « հունվարի » 2025թ. **N 08/18/4200-2025**

«ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 03576331)
տնօրեն Ե. Յայլյանին
(հասցե՝ ՀՀ, Կոտայքի մ., Վ. Պտղնի , 1 փ. 58)
հեռ. 033545383
էլ. հասցե՝sst.llc@mail.ru

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Յայլյան,

ՀՀ քննչական կոմիտեի և «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 17.09.2024թ. կնքվել է թիվ ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ-24/2-1 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), ըստ որի «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ի կողմից պետք է իրականացվեր օդորակիչների մատակարարում:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:»

Վաճառողի կողմից չի պահպանվել Պայմանագրի 2.4 կետով սահմանված պայմանագրային պարտավորությունները:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N2 հավելվածով 25 /քսանհինգ/ հատ օդորակիչների մատակարարումը 17.09.2024թ.-ի կնքված պայմանագրով սահմանվել է, իրականացնել մինչև 16.11.2024թ.-ը: 15.11.2024թ.-ին կնքված Համաձայնագիր N 1-ով ապրանքների մատակարարման ժամկետը երկարացվել է 15 օրացուցային օրով՝ մինչև 01.12.2024թ.-ը որի արդյունքում «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ի կողմից ապրանքների մատակարարում չի իրականացվել:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, ՀՀ քննչական կոմիտեն միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ Հավելված 3.2 և Հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները 631 875 (վեց հարյուր երեսունմեկ հազար ութ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ որակավորման ապահովում և 421 250 (չորս հարյուր քսամնեկ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ պայմանագրի ապահովում) ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետական N 900008000664 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Недействительная подпись

X

ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Подписано: MARGARYAN KAREN 2410820077

Հարգանքով՝

Կ. Մարգարյան

Կապ. Գնումների բաժին
Հեռ. 012-515-415
012-515-419